

## Հաշվետվություն

**Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչության համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի փորձագետ Սմբատ Ղահրամանյանի կողմից 2020 թվականի հոկտեմբերի 1-ից մինչև 2020 թվականի դեկտեմբերի 30-ը ընկած ժամանակահատվածում կատարած աշխատանքների վերաբերյալ**

2020 թվականի հոկտեմբերի 17-ին հայտարարված զորահավաքի շրջանակներում տարածքային գինվորական կոմիսարիատից զորակոչվել են Արցախի հանրապետություն:

«ՏԿԵ գլխավոր քարտուղարի Հ/1510-Ա-2020 հրամանով նույն թվականի հոկտեմբերի 19-ից ժամանակավորապես ազատվել են ծառայողական պարտականությունների կատարումից:


Նոյեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 3-ը ներառյալ ընդգրկված են եղել Սյունիքի մարզի Կապան համայնքի <Խոտանան> ինքնապաշտպանական կամավորական ջոկատում՝ մասնակցելով Դավիթ Բեկ բնակավայրի պաշտպանական մարտերին:

2020 թվականի դեկտեմբերի 7-ից՝ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղարի Հ/1873-Ա-2020 հրամանով անցել են իմ աշխատանքային պարտականությունների կատարմանը: Մասնավորապես կատարել են հետևյալ աշխատանքները՝

1. Աջակցել են Փոխադրամիջոցների գույքահարկի և անշարժ գույքի հարկի հաշվառման հավաքագրման նոր միասնական տեղեկատվական համակարգի (e-community.am) ներդրման աշխատանքներին, որոշ ուղղություններով անմիջական աշխատանք են տարել: Մասնավորապես, համայնքների համար «Ֆինանսների նախարարության կողմից բացված նոր անհատական հաշվեհամարները ուղարկել են մարզպետարանների ֆինանսական բլոկի պատասխանատուներին՝ համայնքներին փոխանցելու համար: Համակարգել են մարզերից և համայնքներից ստացվող, գործընթացի կազմակերպման համար անհրաժեշտ տեղեկատվությունը՝ պատասխանատու VxSOFT կազմակերպությանը պատշաճ ժամկետներում տրամադրելու համար: Սպասարկող կազմակերպության հետ համատեղ Zoom ծրագրի միջոցով կազմակերպել են առցանց հանդիպում-քննարկում համակարգի վերաբերյալ:

2. Ցուցաբերել եմ գործնական աջակցություն ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (ՏԿԵՆ) և Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) համագործակցության շրջանակներում ստեղծված Համայնքային ծառայողների հեռավար ուսուցման կառավարման համակարգի ներդրման և շահագործման աշխատանքներին: Իրականացրել եմ համակարգը փորձնական գործարկելու կազմակերպչական, ինչպես նաև հեռավար ուսուցման կառավարման համակարգում օգտատերերի գրանցման 1-ին փուլի աշխատանքներ (մոտ 1000 համայնքային ծառայող): Մշակել եմ Հեռավար ուսուցման կառավարման համակարգի տեխնիկական ձեռնարկ-նախագիծը:

ՏԻՔ վարչության համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի փորձագետ



Ս. Ղահրամանյան

ՏԻՔ վարչության համայնքային տեղեկատվական հոսքերի կառավարման բաժնի պետ



Գ. Մանուկյան

Վերջապահելով Ս. Ղահրամանյանի կողմից նախարարված  
աշխատանքները գնահատում եմ լավ:

